

վուրդն սպրուժ է խաղաղ պայմանների մէջ։ Այդ դրութիւնը սակայն երկար չի տևում։ Լուսինքնը նորից շարունակում են իրենց ասպատակութիւններն ու հարստահարութիւնները։ Նրանք գրաւում են իրենց հօտերի համար կենսական նշանակութիւն ունեցող բնիկների արօտատեղիներն ու բարձրաւանդակները, որի հետեանքով գրիզացիներն օրըստօրէ դիմում են դէպի անտեսական քայքայում։ Դեռ աւելին։ Լօտերը գնում են Չահարմահալի որոշ հողամասերը և հետզհետէ զօրեղացնում իրենց տիրապետութիւնը։ Այսօր արդէն նրանք տէր են ամբողջ Չահարմահալին։ Լօտերի գերիշխանութեան ներքոյ գտնւող հայ գրիզացիները ցրում են և հաստատում զանազան գրիզներում։ Այնուհետև Չահարմահալի քաղաքի վերականգնման պայտօնը վարում են հետեանալ չորս ազգատոհմերը.

1. Սուքիասեանները – Ահմադաբադում.
2. Ղարախանեանները – Սիրաքում.
3. Բաբումեանները կամ Խուզաբախչեանները – Մամուքայում.
4. Օհանեանները կամ Դաուտիեանները – Գիշնիզանում.

Յիշեալ ազգատոհմերից իւրաքանչիւրն ունենում է 4-500-ի չափ ոչխարներ, մօտ 100 հզնբի, կովեր, ձիեր. իսկ ամբարները լիքն են լինում ցորենով, գարով, իւզով, ձէթով, և այլն։ Նրանց տան դռները բաց են լինում ամենքի առաջ. օտարական ճանապարհորդները միշտ իջնանում են նրանց տները և հիւրասիրում։ Ասենք մի քանի խօսք նրանց մասին։

ԱՐԱՄ ԵՐԻՄԵԱՆ

(Շարունակելի)

Մ. Խ. — Էլը նշանակենք Հոս Հեղինակին նախորդ յօդուածին մէջ սարգած հետեանալ վրիպակները.

ՎՐԻՊԱԿ	ՈՒՂՆԵԼԻ
Գեոնդումանի մահալ	Գեանդումանի մահալ
Չօլակա	Չօլաչա
Վախտուսար	Վախտուսաթ
Ջուռու աղբիւր	Չուռու աղբիւր
Սօվդու	Սօվզու սար



Հ Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Հ Ի Ն Հ Ա Յ Ո Ց Գ Ո Վ

Դ Գ Ր Ո Ց Ա Կ Ա Ն Կ Ր Թ Ո Ւ Թ Ի Ն

(Շար. տես Բագմ. էջ 210)

2. — Յիտ Լուսաւորչի և Տրդատայ մահուան՝ անոնց հիմնած դպրոցները չկարողացան տարբիւլ։ Տրդատայ յաջորդաց անարժան ընթացքը չպիտի նպաստէր անոնց պահպանութեանը, մինչև որ հասաւ մեծին Ներսիսի կորովի ու շինարար բազուկը, որ վերստին նորոգեց Հայաստանի խաթարեալ բարեկարգութիւնը, կուսելով թագաւորաց դէմ. և որիչ ձեռնարկութեանց հետ «կարգէր և ի տեղիս տեղիս դպրոցս յունարէն և ասորերէն՝ յամենայն գաւառս Հայոց»։ Այս դպրոցները, նախորդաց ծրագրով, բայց աւելի ժողովրդական հանգամանք ունենալ կը թուին. որովհետև կը գտնուէին բոլոր գաւառաց մէջ, և այս պատճառաւ ալ ցերեկեայ էին անշուշտ. որոյ համար Ներսէս անոնց առանձին ուսնիկ չի յատկացներ, ինչպէս ըրած էր Տրդատ, և ինքն իսկ Ներսէս՝ հիւանդանոցաց և աղքատանոցաց՝։ Չպիտի սխալինք խորհելով՝ թէ մեծ հայրապետիս ու բարեկարգութեանց հետ՝ վերստին ջրնջուեցան դպրոցներն ալ, որոնք ոչ մէկ կարևորութիւն կրնային ունենալ անոր սպանչին, հեթանոսամիտ ու զեղծարարոյ Պապայ համար։

Փաւստոս նկարագրելով այդ շրջանի հայ ժողովրդեան ցրտութիւնն առ ջրիստոնէական կրօնքը, և հեթանոսական բարքերը՝ որոց ակնարկեցի, կ'ըսէ՝ թէ բացառութիւն կը կազմէին անոնք՝ « որք

զհանգամանս գիտէին հելլէն կամ ասորի դպրութեանց»¹։ Յայտնի է՝ թէ յիշեալ դպրոցաց աշակերտներն էին այդ լեզուա- գէտները, և անոնց գեղեցիկ պտուղները կը կազմէին, և որոց թիւը սակայն հետի էր, ինչպէս նախկին շրջանին, ընդգրկելէ ամբողջ հայ պատանեկութիւնը։

3. — Ինչ ուսումներ կ'աւանդուէին այդ դպրոցաց մէջ։ Մեր պատմիչները կը յիշեն երկու օտար լեզուները և ս. Գրոց գիտութիւնը, և ուրիշ նրիթոց մասին կը լռեն։ Արդեօք տակաւին հոս ալ ուրիշ բան չէին սովորեցներ։ Ս. Ազոտարնոս, որ նոյն Գ դարուն դաստիարակուած էր Ալիւրիկէ, կը վկայէ՝ թէ նոյն կողմերու դպրոցաց մէջ կ'ուսուցանէին լատին և յոյն լեզուները, դասական հեղինակները, Վիլ- գիլիոս, Հոմերոս և ուրիշներ, և թուա- բանութեան²։ Մեր լեզուներն յայտնի են, մեր թրասականք՝ Աստուածաշունչն էր։ Իսկ թուարանութիւնն այնքան կարեւոր եղած է միշտ ամէն ազգերու համար, որ դժուարին էր՝ թէ մեր դպրոցաց մէջ զանց ընէին անոր ուսումը։

Հաւանական չէ, կ'ըսեմ, որ յունարենի հետ յոյն դասականք ալ ուսուցուէին հայ դպրոցաց մէջ, երբ կը նկատենք նոյն դարու արեւմտեան Հարց ոմանց ըով անգամ խոր- շումը հեթանոս հեղինակներէ։ «Դաւիթ, կը գրէ Ս. Յերոնիմոս, մեր Պիւնզարն է, մեր Սիմոնիդը, մեր Աղկէտը, մեր Որա- տիսը, մեր Կատուզոսը, մեր Սեբենոսը»³։ Ի՞թէ արեւմտեայ ըրիտոնէից շա- տերը կը շարունակէին մնանիւ անոցմով, որովհետև իրենցն էին⁴, մեր նախնիք չու- նէին այդ ներքին կապն անոնց հետ, ոչ ալ սեպական հին մատենագրութիւն մը՝ որ հրապուրէր գիրենք։ Որով պիտի շա- տանային ս. Գրոց ուսուցմամբ միայն, որ արդէն կարեւորագոյնն էր՝ հեթանոսութենէ հեռացնելու համար հայ ժողովուրդը։

4. — Երբորդ անգամ պիտի բացուէին մեր դպրոցները Ե դարուն սկիզբը, հայ նշանազարաց գիւտին առթիւ, և շնորհիւ ու գործակցութեամբ ս. Մեսրոբայ, Սահակայ և ազգաշէն Վառձապուհ թագաւորին, որ

զարտուղեւով իւր նախորդաց ընթացքէն, հետևող մը հանդիսացաւ՝ կրթական գոր- ծին մէջ՝ մեծին Տրչատայ, յաւերժացնելով իւր անունը մեր կրթմանէր թագաւորաց ցանցառ ցանկին մէջ։

Հագիւ թէ հայ կամ դանիելեան տա- ուերը գտնուեցան, կաթողիկոսն ու ս. Վարդապետը, կ'ըսէ կորիւն, «հայցելն ևս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն մարթեացն»⁵ սովորեցնել և ի գործածութեան դնել, Առաջին փորձն էր դպրոցաց վերարացման, ուր թագաւորը կը հաւաքէ միասին յարմար տղայոց խումբ մը, անոնց ուսնիկն ալ տալով անտարա- կոյս։ Երբ տեսաւ Մեսրոբ՝ թէ յաշողեցաւ իւր ձեռնարկին մէջ, և «բազումք ի նո- ցանէ տեղեկանային» տառերուն, կը բազ- մացնէ դպրոցներն ամէն կողմ, և «հրա- ման տարյ ամինայն ուրեք նովին կրթել»։ և այս գործով իսկ կը բարձրանար ինքն ալ վարդապետական աստիճանին, կը յարէ նոյն պատմիչը⁶։

Երկու տարի վերջ՝ ս. Մեսրոբ նկատե- լով դանիելեան նշանագրոց անբաւակա- նութիւնը մեր հնչմանց համար, զանոնք լրացուց ինքնահնար տառերով։ Էլ այսպէս հայերէն գրութեան արուեստը հասած իւր կատարելութեան, մեծագոյն մղման մը պատճառ դարձաւ դպրոցական գործին մէջ։ և «Համարձակագոյն և առաւելա- գոյն, կը շարունակէ կորիւն, զաշակեր- տութիւնն նորագիտ վարդապետութեանն խմբէին ուսուցանել և թեքել»։ Այդ «նո- րագիւտ վարդապետութիւնը» տառից ու- սումն է, որ ամէն կողմ տարածուած էր։ Բայց ամէն տեղէ աւելի՝ բուրբին ակնարկը դարձած էր ի վարդաբայտայտ, «ի կայս թագաւորացն և հայրապետացն», ուսկից ծագեցաւ նախ գիրը և թարգմանուեցաւ ս. Գիրքը. և ճի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհին յորդեալք և զըր- դեալք՝ հասանէին (անդր) ի բացեալ աղ-

1. Փառ. 33. — 2. Ա. Գ. Խոս. Ա, 44. — 3. ՅԳ. ԿԿ. 44. — 4. Cabr. Ecole, 1781. — 5. ԿԳ. 9. — 6. Անդ.

բիւրն գիտութեանն Աստուծոյ»։ Հոն՝ ուսանին մէջ՝ աշակերտաց առաջին դասը երբ կը զարգանայ ու կը հասնի «ի կատարումն գիտութեան», որով կարողանային ուսուցանել նաև այլոց, զանոնք կ'անուն կը ցրուեն Հայաստանի բոլոր գաւառաց մէջ, որպէս զի իրենց կարգին տարածեն կրթութիւնը¹։

Վարդապետն այդ չափով չի գոհանար, և աւելի կ'ընդլայնէ իւր գործունէութիւնը։ Առանձին ուշադրութիւն կը դարձնէ Հայաստանի սահմանապահ կամ սահմանակից աշխարհաց, ուր Աւետարանի լոյսը դարէ մ'ի վեր դեռ շատ քիչ թափանցած էր։ Թագաւորին հրամանաւ նախ կ'երթայ Մարագ կողմերը, զոր Հ. Ինճիհեան կ'ուզէ փայտակարան հասկանալ², և զորս կորիւն կը կոչէ «խուժադուժ կողմանս», որոց բնակիչները, բնականապէս Հայեր, ոչ միայն բարուք ընկած կին չարաչար, այլ նաև «խեցրեկագոյն և խշորագոյն լեզու» մ'ունէին, որոյ համար Հայաստանի քարոզչաց «ղծուարամատոյցը» մնացեր էին։ Մերոր կը կրթէ՝ կ'ուսուցանէ զանոնք, այնչափ որ «հայաբարբառը հայերենախօսը» կը դառնան³։

Այստի կ'անցնի Գողթան գաւառը, ուր ինքնին տեսած էր երբեմն կոսպաշտութիւնը դեռ մնացած⁴ և «լի տոնէր զգաւառն ողջունիւ Աւետարանին Քրիստոսի»⁵։ Յետոյ կ'երթայ Միւնեսաց նշանաւոր աշխարհը, ուր Վաղինակ իշխան սիրով կ'ընդունի զինքը, և կը գործակցի իրեն՝ դաստիարակելու տեղւոյն «զազանաժիտ վայրենագոյն ճիւղադարբոյ» բնակչութիւնը, այս նպատակաւ «ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն»⁶։ Վրաստան անգամ անմասն չի մնար անոր բազմաբղիւն պտղաբերութենէն։ Հոն ալ կը հասնի, «առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին», և կ'ընտելացնէ զայն նոյն ազգին⁷։ Նաև Աղուանից «առնէր ապա նշա-

նագիրս»՝ Բենիամինի օգնութեամբ, զոր անոնք կ'ընդունին, «յանձն առեալ դպրոսքեանն հնազանդելոյ»⁸։

Բայց անոր սրտին աւելի մերձաւոր երկիր մ'ալ կար, Բիւզանդոնի հպատակ Հայութիւնը, ուր չէր հասներ մեր թագաւորին ձայնը։ Մերոր կ'ուզէր հասցնել իրենը։ Ելաւ գնաց մինչ և ի կոստանդնուպոլիս, հրաման ստացաւ կայսրէն՝ վարդապետելու մայր հայրենիքէն անըստուած իւր եղբարց ևս։ Հրամանին հետ ընդունեցաւ նաև յունարէն ակոմիոս (անըրն) տիտղոսը, որ յատուկ էր խտտամբեր կրօնաւորաց կարգի մը. և երիցագոյն աշակերտաց հետ դարձաւ ի փոքր Հայ, ձեռնարկեց՝ «բազմութիւն մանկուոյ ժողովել... ի պատեհագոյն տեղիս», անոնց համար ալ «ոռճիկս» կարգելով⁹, զոր կուտար Բիւզանդոնի արքունիքն՝ ըստ խորենացւոյն¹⁰։

Պէտք է անգամ մ'ալ կրկնեմ՝ թէ Մեսրոբայ բացած այդ բոլոր դպրոցներն աշխարհական պատանեաց համար էին, և զատ անոր վանական դպրոցէն՝ զոր իւր կրօնաւոր ունէր ու կը պահէր տաղից գիւտէն յառաջ, և զոր պիտի տեսնենք իւր կարգին։ Զի նախ՝ ոչ արքայն և ոչ վարդապետները կարող էին իրենց սխորժած պատանիները հաւաքել ու կարգել վանական կամ եկեղեցական կոչման, որ բնատուր լինելու է. ոչ ալ ուրիշ շատեր «յորդեալը և զրդեալը» պիտի փութային ինքնայօժար նոյն լծին ներքև։ Երկրորդ՝ աշակերտութեան առնուած մանկանց վրայ կը փնտռուին այնպիսի ձիրքեր, ինչպէս «ընտրեալս՝ ուշեղս և քաջառուս (պերճարան), փափլաժայնս և երկարողոս»¹¹, որոնք կը վերաբերին ոչ թէ վանական այլ արտաքին դաստիարակութեան, ինչպէս յետոյ կը տեսնենք։ Եւ երրորդ՝ յայտնապէս առ վկայուած է՝ թէ այդ դպրոցաց մէջ կը յաճախէին նաև իշխանաց զաւակ-

1. Կոր. 13. — 2. Ինճ. Գ, 84. — 3. Կոր. 12, — 4. Նոյն՝ 7. — 5. Նոյն՝ 14. — 6. Անդ. — 7.

Նոյն՝ 15. — 8. Նոյն՝ 18, 19. — 9. Կոր. 17. — 10. Խոր. Գ, 84. — 11. Նոյն՝ Գ, 84.

ներ, որոցմէ յետոյ հաւարուած կը գտնենք Ս. Մեսրոբայ մահճին շուրջ՝ եկեղեցականաց հետ միասին, պատմչէն երկու դասակարգը միանգամայն կոչուած «զըլուաւոր աշակերտը», սփոփելու վարդապետին օրհասի վիշտը: Անոնցմէ կը թուէ կորիւն՝ իբր եկեղեցական՝ զՅովսէփ և զԹադրիկ. «Իսկ ի զինուորական կողմանն»՝ այսինքն տոճմիկ աշակերտներէն՝ ներկայ էին, կ'ըսէ, վահան Ամատունի և Հմայիակ Մամիկոնեան, «արք պատուականք երկու դածը հրամանակատարը վարդապետական հրամանաց», որոնք անոր փառաւոր թաղում մ'ալ կը կատարեն՝ Պատմութիւնը չ'ընդունիր, և անկարելի իսկ էր՝ որ բազմազարդ վարդապետը աշխարհէ աշխարհ շրջած ու տարիներով դեգերած լինէր իշխանաց ապարանից մէջ՝ ուսուցանելու և դաստիարակելու համար անոնց մանկտին: Ալ ինչպէս ըսի, վերոյիշեալ դպրոցաց մէջ կրթուած էին անոնք Ազոցի կը թուի նաև Եղիշէ պատմագիրը, որ իբր աշխարհական դաստիարակուած և ապրած էր մինչև վարդանանց պատերազմը, յետ որոյ կրօնաւորական վիճակը ստանձնեց՝:

Ծ. — Ղազար Փարպեցին՝ Մեսրոբայ ամբողջ կրթական գործունէութեան արդիւնքը կը համառօտէ հետագայ բացատրութեան մէջ. «Կարգեցան վաղվաղակի յայնմ հետէ դպրոցը հօտին ուսմանց, բազմացան դասը զրչաց՝ ելեւելս առնելով զմիմեամբը»¹: Ինչ բաներ ուսան և գրեցին այդ գրիչները, զորս չենք կրնար անշուշտ իմանալ զրչագրաց ստակական օրինակողներ, որոց մէջ մրցակցութեան տեղի չէր կարող լինել:

Թարգմանչաց դպրոցները կը տարբերէին նախորդներէն՝ իրենց ուսումնական ծրագրով, Նախ՝ առաջնոց յոյն և ասորի լեզուաց կը յաջորդէ հոս հայ նորագիւտ եւրասիացիներ ու տոճմային յեղուն, ինչպէս ընդարձակօրէն տեսանք վերև. «Քանզի ամենայն անձն, կ'ըսէ Փարպեցին, յոր դորեալ փափարէր յուսումն հայերէն գիտութեան»²: Եւ ո՛ր և է օտար լեզուի ու

սուցման չենք հանդիպիր հիմայ. որովհետև անոնք Հայաստանէն դուրս պիտի ուսուցուէին այնուհետև, որոյ մասին յաջորդ գլխոյն մէջ:

Ինչ էր անոնց ուսուցած հայերէնը: Ոչ անշուշտ նորակերտ լեզու մը, ինչպէս եղան կարծողները, ոչ ալ աւանդական ուրոյն գրական բարբառ մը: Ալ ժամանակի խօսուն լեզուն՝ որ կ'ապրէր Հայաստանի քաղաքական ու կրօնական կեդրոնին մէջ, և կը զանազանէր գաւառականներէն՝ որոց ակնարկեցիք³. և որ հասած է մեզ թարգմանչաց թողած մասնազրուութեան մէջ: Այս պարագայն կը հաստատուի հետագայ փաստերով:

ա. Մեսրոբայ հայ գիրը հնարելու նպատակն էր՝ հայ ժողովրդեան ձեռքը տալ ս. Գիրքն «իւրեան ձայնի, և ոչ մուրացածոյ բարբառով»՝ ինչպէս ասորերէնէն էր, ուսկից ժողովուրդը ոչինչ էր հասկնար⁴. և երկու կտակարանք թարգմանութիւ՛լով՝ «հայտարարսք հայերէնախօսք գտան»⁵: Ուրեմն անոնց լեզուն հասարակացն էր — բ. Մարդիկ կը մատենագրեն՝ ժողովրդեան խօսելու համար. պիտի հեռանային նպատակէն, եթէ խօսէին հասարակութեան անիմանալի և կամ դժուարին լեզու մը. հետևարար թարգմանչաց բարբառը ժողովրդեանն էր, — գ. Ե դարը տառից գիւտէն յառաջ չէր կարող երկու լեզուն եննալ. մին խօսուն և միւսը գրաւոր. զի գրաւորը չկայ առանց գրին. և մի և նոյն շրթմանց վրայ չէին կարող երկու տեսակ հայերէն ծաղկիլ և ապրիլ: — դ. Ոչ ալ յետ տառից գիւտին կարելի էր նոր հայերէն մը ստեղծել. զի լեզուները բնախօսական օրինօք կը փոփոխուին հանդարտօրէն՝ ժամանակի ընթացքին մէջ, և ոչ թէ յանկարծակի: — և. Ս. Մեսրոբ հազիւ գիրը կազմեց՝ անմիջապէս ս. Գրոց թարգմանութեան ձեռնարկեց՝. և իւր

1. Կոր. 27. — 2. Եղեւ. 14. Զար. Գար. 334. — 3. Բար. 47. — 4. Նոյն՝ 42. — 5. Բար. 1906. 245-6. — 6. Աստ՝ ... — 7. Բար. 36. — 8. Կոր. 18. — 9. Նոյն՝ 10.

Թարգմանութեան կան նշխարներ ընտիր հայերենով, ինչպէս Մնացորդաց գրքերը՝ հրատարակուած Գր. Խալաթեանէ, և այլք։ հետևաբար Մեսրոպ ոչ ժամանակ և ոչ պէտք ունեցաւ վերածնելու կամ կոկեղու խօսուուն բարբառը, այլ ուղղակի զայն գրեց։ — գ. Գողթեան երգերը, հաւաքուած ժողովրդեան բերանէն, նոյն զբարբառով շարադրուած են։ — Կ. Գրաբարի գանազանութիւնն ալ՝ Թարգմանչաց գրչին ներքեւ՝ ուրիշ նշան մ'է անոր կենդանութեան, որով անոր մէջ մտեր է գրողին անհատականութիւնը՝ գաւառական թեթև տարբերութեամբը հանդերձ. ապա թէ ոչ՝ միաձոյլ լեզու մը պիտի լինէր՝ առանց հոմանշեցու, առանց սեպական ոճերու և քերականական այլազան ձևերու, որոնք ապրող լեզուի ձիրքեր են։ — Ը. Խորեանցին կ'ըսէ՝ թէ ուզեր է յորինել իւր պատմութիւնը « հասարակաց խօսիք »¹, զոր սիւս է հասկանալ ժողովրդեան բարբառ՝ տարբեր սզնուականէն². զի իւր գրածն արդէն ընտիր զբարբառն է. այլ կ'իմանայ պատմական ոճը, ինչպէս կը զգացնէ՝ յարելով. « որպէս զի մի երկեսցի (ընթերցողն) ի պիւնաբանարիւնս գրուեալ առ փափագն, այլ ճշմարտութեան բանից մերոց կարօտեալ »³։

Մեզ հասած այդ զբառը ու կենդանի հայերէնէն էր ուրեմն՝ որ կ'իշխէր մեսրոպեան դպրոցաց մէջ։

Կարգով երկրորդ՝ բայց կարևորութեամբ առաջին՝ զոր կ'ուսանին, ս. Գրոց հետոքիւն է, զոր կորին կ'որակէ՝ « գիտութեան Աստուծոյ » և կամ « շնորհք պատուիրանացն Աստուծոյ » բացատրութեամբ⁴, որոյ համար իսկ հնարուած տեսանք տառերը. և որոյ մէջ մեր աւագանուոյն անգամ « ի մանկութենէ » ստացած հմտութիւնը ցոյց տուի կանխաւ։

Յոյն և լատին դպրոցաց մէջ կը մշակուէր՝ թէ՛ հեթանոսութեան ժամանակ և

թէ՛ այդ շրջանին՝ քերականութիւնն ալ, որոյ մեր մէջ ևս զոյութեան ապացոյցներ չեն պակասիր, կարգուած հայերէնն ուսման հետ։ Եւ նախ Գիտն. Թրակագույր քերականին հայացումը, որ իմ համոզմամբ կատարուած է Ե դարուն կիսէն կանուխ. և ասոր ապացոյց են զուս ոսկեղաբեան հայ անուանք՝ որ կը բովանդակուին հոն, ինչպէս Մանէն, Արտակ, Բարզէն, Կորիւն, Մաշտոց, Մանուէլ, և Աւետարանի Բաներեգէս անուան թարգմանութիւնը Ջայն զոյման, փոխանակ բնագրին Որդի որտամակ ձեւին. ազատութիւն մը՝ որ յատուկ էր ոսկեղաբեան թարգմանչաց, երբ ս. Գրոց թարգմանութիւնը տակաւին չէր ընտանեցած ամենուն։ Այդ քերականութիւնը բառացի թարգմանութիւն մը չէ, այլ ազատ և յարմարած հայ լեզուին, որով և Հայոց գործանութեան համար, և առաւելապէս զվրոցաց։ Նոյն քերականի մեկնութիւնը տուած են յետոյ Գիտն. Թրակագույր, Մովսէս Երթող և այլք⁵, որոցմէ երկուրդ զուցէ իրենց աշակերտութեան ժամանակ իսկ հմտացան անոր։

Արեւմտայր կ'ուսուցանէին ինձմով ձարտասանարիւնն ալ⁶, նոյնպէս և բիւզանդացիք⁷, որ անձանօթ չէ նաև մեր ըով։ Կորիւն խօսելով Մեսրոպեանց ի Մարս կատարած առաքելութեան արդեանց մասին, կ'ըսէ՝ թէ իրենց աշակերտները՝ « պարզախօս հեծողարարան՝ կրթեալս աստուածատուր ի մաստութեանն ծնունդս կացուցանէին »⁸։ Պատմիչ սկնարիկէ կը թուի սրբազան պիւնախօսութեան, որոյ մէջ կը փայլէին այդ շրջանին եկեղեցւոյ վարդապետներէն մէջ շատեր, Բարսեղ, Ոսկեբերան, Գր. Նազիրանզացի և այլք. և մեզմէ՛ Յրահան Մանդակուտի, աշակերտ մեսրոպեան դպրոցաց և յետոյ կաթողիկոս, որ թողուց իւր զեղեցիկ ճառերը՝ տպագրութեամբ ալ ծանօթ։ Ստ. Ասողիկ կ'ուզէ՝ որ Եզրաս Անգեղացին, զոր կը համարի

1. Խոր. Գ. ա. — 2. Բզ. 1906; 245. — 3. Կր. 1906. — 4. Cabr. Ecole, 1778-82 ն. — 7. Ա. Բզ. Գ. Գ. ա. — 4. Կոր. 18. — 5. Զ. 322, 367. — 6. Ա. 569. — 8. Կոր. 12.

ՈՅ ԵՆ. Ն. Բ. ՊՈՏ. Ի
 А. МЯСНИКОВ
 СПИРАЛЬНЫЕ
 16
 2504-11 P
 А. К. М. П.

աշակերտ Խորենացոյն, պերճախօսութեան ուրոյն դարոց մը բացած լինի. « Զդասս ճարտասանիցն բազմացուցանէր »¹: Յաղագս պիտոյից գիրքը, վերագրուած Խորենացոյն, խնդիր չէ՞ ինքնագիր թէ թարգմանարար յօրինեալ, և Դաւիթ Անյաղթի Սահմանք իմաստասիրոսրեան՝ ճարտասանութեան դասեր տուին Հայոց աշակերտութեան:

Իրցն ու երաժշտութիւնն ալ մասն էին արեւմտեայց ուսումնական ծրագրին², որոյ ձայնականին գոյութեանը նաև մեր քով՝ ունինք նշմարանք մը. և նոյն ինքն Խորենացոյն վերոյիշեալ վկայութիւնը³, որոյ համեմատ մեսորեանն դպրոցաց աշակերտաց մէջ հաւաքած էին նաև մանուկներ « փափկածայնս և երկարողիս », որ է երկար շնչով. յատկութիւնը՝ որ կարևոր էին երգեցողութեան համար միայն, և սոսկական գիտութեան աւելորդ:

Այս շրջանիս մէջ ալ յոյն հեթանոս մատենագրութիւնը վերտարուած կը մնայ հայ դպրոցէն: Իզնիկ կը գրէ « յոյն իմաստնոց » հակառակ, և մեր թարգմանիչը կը հրատարին հեթանոս հեղինակները հայացնելէ:

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)

1. Առք. 83. — 2. Cabr. 1747. — 3. Աս՝ ...



Ո՛րքան համառօտը են վաստակն և ժամանակը, և քանի՞օն երկար վարձքն և փոխարէնը. քանի՞ սակաւ և իրրև ոչինչ մի է զինն զոր տամը, և ո՛րքան բազում և անբաւ ստացուածն զոր վայելիմը:

ԱԼԻՇԱՆ

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

Հ Ա Յ Ե Բ Ի Ե Ն Ն Ո Ր Բ Ա Ռ Ե Բ

ՅԱԿՈՒԲ ԿԱՐԵՑՑԻՈՑ

ՎԵՐԻՆ ՀԱՅՈՑ ՏԵՂԱԳՐԻՆ ՄԷՋ

(ԽԿ. ՎՂՂԿԿ. 1908)

(Շար. տես Բազմ. 1922 էջ 364)

1. Խխօրան

Իլլանեն բազում ակունք և լինի գետ սուր և Խխօրան և մտանէ անհուն ձորն Միրանայ և Սառչամու (էջ 47):

Այլուտ անձանթ բառ մ'է, որ իրրև ածական գործածուած է գետին համար՝ « սրընթաց կամ անհոգ » նշանակութեամբ: Կրկին ածականներուն համար հմմտ. նոյն հեղինակին քով՝ էջ 52. « Ի Ռայլ գետու ելանեն անթիւ ակունք, ի գեղջէն կարմրոյ լեռանցն ժողովեալ մտանեն ընդ ձորն և լինին գետ սուր և զարհուրելի »:

Ախօրան բառը կազմութեամբ բոլորովին անյայտ է, թրք. և պրս. լեզուներուն մէջ ալ նման ձև մը գոյութիւն չունի, որմէ փոխառեալ ըլլայ. Բայց գիտենք որ Յակոբ կարնեցին ուրիշ տեղ մը նոյն բառը կը գործածէ իրրև յատուկ անուն Ախօրեան գետի. « Եւ գետն զայ Ղարսայ և յԱնոյ, որ է Ախօրան » (էջ 50): Ասկէ կրնանք հետեցնել թէ յատուկ անունը յետոյ հասարակի վերածուած է:

2. քանտար

Ձի այժմ քաղաքս այս յոյժ բանտար է նման Ստամբուլայ, որ տարին ժիւ բնօ մտանէ և ելանէ (էջ 37):

Տեղէն կ'երևի որ կը նշանակէ « բանուկ, վաճառաբան քաղաք » և ըստ այսմ կրնայ համարուիլ քան Վ տանիլ բառերէն ծագած, ինչպէս ունինք քանուկ: Բայց այս ստուգաբանութիւնը անշուշտ կեղծ է և բառը պէտք է զնել պրս. بانداز, Bandar